# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2025թ. N ՄՈ/1043-Ա

ք. Արմավիր

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայասատնի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 18-րդ և 27-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2025 թվականի դեկտեմբերի 16-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ից 2026 թվականի հունվարի 7-ը ներառյալ՝ 3 աշխատանքային և 4 տոնական օր տևողությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2024-2025 թվականների աշխատանքային

տարվա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր տևողությամբ, տեղափոխել և տրամադրել 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ